

## ԱՐԱՍԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1-2

2019 թ. սեպտեմբերի 19-ին ժ. 12<sup>20</sup>ին տեղի ունեցավ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ, նիստին մասնակցում էին ամբիոնի անդամները:

### ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2019 – 2020 ուս. տարվա առկա և հեռակա համակարգերի ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:  
Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան
2. 2019 – 2020 ուս. տարվա 1-ին կիսամյանի մանկավարժական պրակտիկայի աշխատանքների ընթացքի մասին:  
Զեկուցող՝ Վ. Վարդապետյան
3. 2019 – 2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասավանդող առարկաների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների, հարցաշարերի հաստատում:  
Classroom իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:  
Զեկուցող՝ Ա. Մկրտչյան
4. 2019 – 2020 ուս տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:  
Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան
5. Ընթացիկ հարցեր:

### ԼՍԵՑԻՆ՝

2019 – 2020 ուս. տարվա առկա և հեռակա համակարգերի ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հ. Միաքյեյանը, Ս. Հարությունյանը, Ա. Ղուշյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաները:

## ԼՍԵՑԻՆ՝

2019 – 2020 ուս. տարվա 1-ին կիսամյանի մանկավարժական պրակտիկայի աշխատանքների ընթացքի մասին:

### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Վ. Վարդապետյանը, ով մասնավորապես նշեց, որ առաջին կիսամյակում «Մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսի թվով 35 ուսանողների մանկավարժական շարունակական պրակտիկան անց է կացվում Չարենցի թիվ 67 դպրոցում, մեթոդիստ՝ Ա. Մինասյան, թիվ 104 դպրոցում, մեթոդիստ՝ Ն. Դովլաթյան և ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում, մեթոդիստ՝ դոցենտ Ա. Մկրտչյան:

4-րդ կուրսի թվով 30 ուսանողների մանկավարժական պրակտիկան նախատեսվում է կազմակերպել հոկտեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 15-ը, ՀՊՄՀ հենակետային վարժարանում, N2, N67 դպրոցներում:

Մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվելու է Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ 10.11-28.11.2019թ.:

Ա. Գրիգորյանը առաջարկեց մագիստրատուրայի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպել ավագ դպրոցներում:

### ՈՐՈՇԵՑԻՆ՝

հաստատել պրակտիկայի մոնիտորինգի հետևյալ ժամանակացույցը՝

Կուրս	Օր/Ժամ	Պրակտիկայի պատասխանատու
ԱԲ 3	25.09.19/13:00 N104 դպրոց	Վ. Վարդապետյան
	09.10.19/12:00 ՀՊՄՀ հենակետային վարժարան	Լ.Ղուլղազարյան
	30.10.19/12:30 N 67 դպրոց	Վ. Վարդապետյան
	13.11.19/13:00 N 67 դպրոց	Ա.Գրիգորյան
	27.11.19/ 11:00 ՀՊՄՀ հենակետային վարժարան	Վ. Վարդապետյան
ԱԲ 4	12.11.19/12:00 ՀՊՄՀ հենակետային	Լ.Ղուլղազարյան

	վարժարան	
	02.12.19/12:00 N2 դպրոց	Ա.Գրիգորյան
	12.12.19/12:00 N67 դպրոց	Վ. Վարդապետյան
ԱՄ 2	10.11.19-28.11.19	Լ.Ղուլղազարյան

Առաջարկել մագիստրատուրայի 2-րդ կուրսի այն ուսանողներին, որոնք չեն անցել մանկավարժահետազոտական պրակտիկան, անցկացնել ավագ դպրոցներում:

ԼՍԵՑԻՆ՝

2019 – 2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասավանդող առարկաների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների, հարցաշարերի հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել 2019 – 2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասավանդող առարկաների առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ՝ Classroom իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Մկրտչյանը, ով մասնավորաբար նշեց, որ այս ուս. տարում Classroom–ում իրականացվող աշխատանքները մի փոքր հետաձգվեցին՝ ամբիոնում տեղի ունեցած կադրային փոփոխությունների պատճառով: Արդեն բացվել են էլեկտրոնային դասընթացները, ուստի հարկավոր է էլեկտրոնային դասընթացներում տեղադրել դասընթացների դասախոսությունների և գործնական աշխատանքների փաթեթները, ուսանողներին տրամադրել դասընթացների կողերը: Սեպտեմբերի 25-ից ամբիոնը կունենա նոր մասնագետ, որը կտեղադրի դասընթացներում այսօրվա նիստով հաստատված առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ՝

2019 – 2020 ուս տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել 2019 – 2020 ուս տարվա աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ՝

Ամբիոնի կողմից մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդում ընդգրկվելիք անդամների կազմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, Ա. Ղուլջյանը, Հ. Միքայելյանը, Գ. Ղուլղազարյանը:

Լ. Ղուլղազարյանը առաջարկեց մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդ ներկայացնել հետևյալ անդամների կազմը՝

Պրոֆ. Լ. Ղուլղազարյան, պրոֆ. Ս. Հարությունյան, պրոֆ. Ա. Ղուլջյան, պրոֆ. Լ. Արաբաջյան և Ա. Գրիգորյան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ներկայացված անդամների կազմը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝



Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ԱՐՁԱԳՈՒԹՅՈՒՆ 3

2019 թ. հոկտեմբերի 23-ին ժ. 14<sup>20</sup>ին տեղի ունեցավ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ, նիստին մասնակցում էին ամբիոնի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ. –

1. I միջանկյալ ստուգումների քննաշրջանի ընթացքի մասին:  
Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան
2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և մագիստրոսների գիտամանկավարժական պրակտիկայի մասին:  
Զեկուցող՝ Վ. Վարդապետյան
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: Հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների լրացում և վերահաստատում:  
Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան, ամբիոնի դասախոսներ
4. 2019-2020 ուս. տարվա հեռակա բաժնի 1-ին և 2-րդ կուրսերի ուսումնական գործընթացի վերաբերյալ:  
Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան
5. Classroom հարթակում իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:  
Զեկուցող՝ Փ. Համբարձումյան
6. Ընթացիկ հարցեր.  
ա) Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ուսանող Ռոման Վյաչեսլավի Ալեքսանյանի ավարտական աշխատանքի ղեկավարման հարցի քննարկում:

#### 1. ԼՍԵՑԻՆ՝

I միջանկյալ ստուգումների քննաշրջանի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

#### 2. ԼՍԵՑԻՆ՝

4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և մագիստրոսների գիտամանկավարժական պրակտիկայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ. Վարդապետյանը, ով մասնավորապես նշեց, որ 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան ընթանում է բնականոն հունով: Նշվեց նաև, որ մագիստրատուրա 2-րդ կուրսում գիտամանկավարժական պրակտիկան սկսվելու է նոյեմբերի 11-ին և տևելու է 3 շաբաթ: Այդ ընթացքում ուսանողները, ցանկության դեպքում, հնարավորություն կունենան այցելելու նաև Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց դասալսումներ կատարելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

### 3. ԼՍԵՑԻՆ՝

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: Հեռակա բաժնի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների լրացում և վերահաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյան, Հ. Միքայելյան, Ս. Խաչատրյան, Ս. Հարությունյան, Յու. Սաֆարյան:

Քննարկեցին հեռակա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների լրացման հարցը: Քվեարկության արդյունքներն են՝ 18 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել հեռակա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերամշակված և լրացված թեմաները:

### 4. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուս. տարվա հեռակա բաժնի 1-ին և 2-րդ կուրսերի ուսումնական գործընթացի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ արդեն իսկ առկա են նշված կուրսերի ուսումնական գործընթացի ժամանակացույց՝ առցանց և առերես իրականացմամբ, ուստի անհրաժեշտ է հետևելով ժամանակացույցին կատարել աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

### 5. ԼՍԵՑԻՆ՝

Classroom հարթակում իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Փ. Համբարձումյանը, ով մասնավորապես նշեց որոշակի բացթողնումների առկայությունը, որոնք մոտակա ժամանակահատվածում կշտկվեն: Ինչպես նաև նշվեց, որ առաջին միջանկյալ ստուգումների ավարտից հետո անհրաժեշտ է բոլոր կուրսերում տեղադրել էլեկտրոնային առաջադրանքները: Արդեն բացվել են հեռակա բաժնի 1-ին և 2-րդ կուրսերի էլեկտրոնային դասընթացները և տեղադրված են առարկայական նկարագրերը, ուստի հարկավոր է էլեկտրոնային դասընթացներում ըստ ժամանակացույցի տեղադրել դասընթացների դասախոսությունների և գործնական աշխատանքների փաթեթները, ուսանողներին տրամադրել դասընթացների կողերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ուսանող Ռոման Վյաչեսլավի Ալեքսանյանի ավարտական աշխատանքի ղեկավարման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ Լ. Ղուղազարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի պետական ավարտական քննությանը դիպլոմային աշխատանքի տեսքով մասնակցելու համար դիմում գրած ուսանող Ռոման Վյաչեսլավի Ալեքսանյանի ավարտական աշխատանքի ղեկավար նշանակել ամբիոնի դասախոս Ադամի Գրիգորյանին:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝



Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## ԱՐՁԱԳՈՒԹՅՈՒՆ 4

2019 թ. նոյեմբերի 14 -ին ժ. 14<sup>20</sup>-ին տեղի ունեցավ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ, նիստին մասնակցում էին ամբիոնի անդամները:

### ՕՐԱԿԱՐԳ –

1. Առաջին միջանկյալ ստուգումների ամփոփում  
Ջեկուցող՝ Ա. Մկրտչյան
2. Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին  
Ջեկուցող՝ Վ. Վարդապետյան
3. Դասախոսների գիտահետազոտական աշխատանքների հաշվետվություն  
Ջեկուցող՝ Ա. Մինասյան

#### 4. Ընթացիկ հարցեր

ա) Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Ստեփանյան Սուսաննայի մագիստրոսական թեզի թեմայի վերնագրի ճշգրտում:

բ) Լևոն Բերբերյանի 110-ամյակին նվիրված միջոցառման կազմակերպում:

գ) Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Գասպարյան Սաբինայի մասնակցությունը Էրասմուս Պլյուս կրեդիտային շարժունության ծրագրին (Մեծ Բրիտանիա, Կիլ համալսարան)

դ) ՄՖԻ-2 և ԿՔԱ-3 ֆակուլտետների կողմից կազմակերպվող մրցույթ:

#### 1. ԼՍԵՑԻՆ՝ Առաջին միջանկյալ ստուգումների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Մկրտչյանը, ով նշեց, որ առաջին միջանկյալ ստուգումները ընթացել են բնականոն հունով և արտառոց դեպքեր չեն գրանցվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

**2. ԼՍԵՑԻՆ՝ Մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ. Վարդապետյանը, ով մասնավորապես նշեց, որ 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան կավարտվի նոյեմբերի 15-ին: Նշվեց նաև, որ մագիստրատուրա 2-րդ կուրսում գիտամանկավարժական պրակտիկան արդեն սկսվել է և ընթանում է բնականոն հունով: Որոշ ուսանողներ նաև այցելում են Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց և բավականին գոհ են պրակտիկայի ընթացքից: Քննարկվեց նաև 4-րդ կուրսի պրակտիկայում ուսանողների բացակայության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

**3. ԼՍԵՑԻՆ՝ Դասախոսների գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունը:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Մինասյանը, ով մասնավորապես նշեց, որ 2019 թվականին ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել կամ տպագրման են ներկայացվել 4 ուսումնական ձեռնարկներ, 2 մենագրություններ, 43 հոդվածներ, որից 23-ը եղել է հայաստանյան և օտարերկրյան գիտաժողովների, 5-ը ցիտվել է SCOPUS կամ РИНЦ ամսագրերում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

**ա) ԼՍԵՑԻՆ՝ Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Ստեփանյան Սուսաննայի մագիստրոսական թեզի՝ «Երկրաչափական անհավասարությունները ավագ դպրոցի մաթեմատիկայի դասընթացում» վերնագրի ճշգրտման հարցը:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, Ս. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Ստեփանյան Սուսաննայի մագիստրոսական թեզի՝ «Երկրաչափական անհավասարությունները ավագ դպրոցի մաթեմատիկայի դասընթացում» վերնագիրը վերաձևակերպել «Ածանցյալը և ինտեգրալը որպես միջառարկայական կապերի ձևավորման գործոն»:

բ) ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Բերբերյանի 110–ամյակին նվիրված միջոցառման կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, Ս. Բերբերյանը, Հ. Միքայելյանը, Ա. Ղուշյանը, Օ. Սահակյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

գ) ԼՍԵՑԻՆ՝ Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Գասպարյան Սաբինայի մասնակցությունը Էրասմուս Պլյուս կրեդիտային շարժունության ծրագրի հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով մասնավորաբար նշեց, որ 2020 թվականի հունվարի 6-ից ապրիլի 26–ը մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Գասպարյան Սաբինան մասնակցելու է Էրասմուս Պլյուս կրեդիտային շարժունության ծրագրին: Այդ իսկ պատճառով 2-րդ կիսամյակում Գասպարյան Սաբինան կմասնակցի դասընթացներին Classroom էլեկտրոնային հարթակի միջոցով:


ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

դ) ԼՍԵՑԻՆ՝ ՄՖԻ–2 և ԿՔԱ–3 ֆակուլտետների կողմից կազմակերպվող մրցույթ մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ երկու ֆակուլտետների կողմից կազմակերպված մրթույթը կկայանա նոյեմբերի 22-ին, որին մասնակցում են Հայաստանի տարբեր շրջանների 50-ից ավելի 12–րդ դասարանի սովորողներ: Մրցույթի կազմակերպմանը մասնակցում են Լ. Ղուլղազարյանը, Գ. Ասատրյանը, Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ 

Լ.ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## ԱՐՁԱՊՈՒԹՅՈՒՆ 5

2019 թ. դեկտեմբերի 5-ին ժ. 12<sup>20</sup>-ին տեղի ունեցավ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ, նիստին մասնակցում էին ամբիոնի անդամները:

### ՕՐԱԿԱՐԳ –

1. Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորում:

Զեկուցող՝ Ս. Հարությունյան, Օ. Արաբյան

2. ՆՁԱԿ գիտատեխնիկական գրադարան դասախոսների դասախոսությունների, դասագրքերի, ուսումնաօժանդակ ձեռնարկների էլեկտրոնային տարբերակների տրամադրման հարցը:

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

3. Classroom էլեկտրոնային հարթակում մշտադիտարկման իրականացման քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

4. Մաթեմատիկա մասնագիտության հեռակա ասպիրանտուրայի 2019-2020 ուս. տարվա ընդունելության հարցաշարերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

5. Ընթացիկ հարցեր:

ա) Ամբիոնի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի հայցորդների և ասպիրանտների ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս. Հարությունյան, Օ. Արաբյան, Լ. Ղուլղազարյանը, Հ. Միքայելյանը, Լ. Արաբաջյան:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել 4-րդ տարվա հայցորդ Օֆելյա Արաբյանին՝

/ղեկավար Ս.Հարությունյան/ հաշվի առնելով, որ նա հաշվետու ժամանակահատվածում տպագրել է 1 հոդված, ևս մեկը ներկայացրել է

տպագրության, հանձնել է որակավորման քննություն փիլիսոփայություն  
առարկայից, աշխատում է թեկնածուական թեզի վրա:

2. ԼՍԵՑԻՆ՝ ՆԶԱԿ գիտատեխնիկական գրադարան դասախոսների  
դասախոսությունների, դասագրքերի, ուսումնաօժանդակ ձեռնարկների  
էլեկտրոնային տարբերակների տրամադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Classroom էլեկտրոնային հարթակում մշտադիտարկման իրականացման  
քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով Classroom էլեկտրոնային հարթակում  
բոլոր դասընթացների համար առաջարկեց հաստատել մշտադիտարկման  
գնահատման հետևյալ չափանիշները՝

1. Առարկայական նկարագրեր (առկա և հեռակա բաժիններ) և թեմատիկ  
տրոհումներ (առկա բաժին),
2. Հարցաշարեր,
3. Դասավանդվող նյութեր,
4. Գնահատվող մեկ հանձնարարություն (գնահատվող հանձնարարության  
գնահատականը կազմելու է ընթացիկ ստուգման գնահատականի 5 տոկոսը):

Համապատասխան չափանիշների առկայությունը գնահատվելու է՝ առկա է, առկա չէ,  
մասամբ է առկա ձևաչափերով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Classroom էլեկտրոնային հարթակում բոլոր դասընթացների  
համար վերը նշված մշտադիտարկման գնահատման չափանիշները:

4. ԼՍԵՑԻՆ՝ Մաթեմատիկա մասնագիտության հեռակա ասպիրանտուրայի 2019-2020  
ու. տարվա ընդունելության հարցաշարերի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուղազարյանը, Ս. Հարությունյանը, Հ. Միքայելյանը, Ա. Ղուշյանը, Ս. Խաչատրյանը, Լ. Արաքաջյանը, Գ. Ղուղազարյանը:

Ա. Ղուշյանը առաջարկեց հարցաշարում ավելի լայն ներկայացնել դասավանդման մեթոդիկային վերաբերվող բաժինը: Հ. Միքայելյանը առաջարկեց բացի մեթոդիկայից հանել մնացած բաժինները: Ս. Խաչատրյանը առաջարկեց վերաձևակերպել որոշ հարցեր: Լ. Արաքաջյանը, Ս. Հարությունյանը և Գ. Ղուղազարյանը դրական գնահատեցին հարցաշարի ձևաչափը և առաջարկեցին չձևափոխել այն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ որոշակի փոփոխություններ կատարելուց հետո հաստատել վերամշակված հարցաշարը կողմ՝ 16, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1, ձայների բաշխումով:

5. ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուղազարյանը, ով ներկայացրեց ամբիոնի տարեկան հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի տարեկան հաշվետվությունը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝



Լ.ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ.ՀԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ 6

2019 թ. դեկտեմբերի 24-ին ժ. 12<sup>20</sup>-ին տեղի ունեցավ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ, նիստին մասնակցում էին ամբիոնի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ –

1. Երկրորդ միջանկյալ ստուգումների ընթացքի և ձևեռային քննաշրջանի նախապատրաստման աշխատանքների մասին

Ձեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

2. Հեռակա բաժնի էլեկտրոնային ընթացիկ հանձնարարությունների և միջանկյալ ստուգումների կատարման մասին

Ձեկուցող՝ Փ. Համբարձումյան

3. 2-րդ կուրսի մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի և 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսների 1-ին կիսամյակի հաշվետվություններ

Ձեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

4. Առկա 4-րդ կուրսի և հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին :

Ձեկուցող՝ Ամբիոնի դասախոսներ

5. Ընթացիկ հարցեր

ա) Թույլ տալ մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Սարինա

Գասպարյանին ամփոփիչ քննությունները հանձնել միջանկյալ ստուգումների քննաշրջանում:

բ) Մասնագիտական առարկաների ծրագրերի վերանայման հանձնաժողովների ստեղծման մասին:

1. ԼՍԵՑԻՆ՝ Երկրորդ միջանկյալ ստուգումների ընթացքի և ձևեռային քննաշրջանի նախապատրաստման աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով մասնավորաբար նշեց, որ երկրորդ միջանկյալ ստուգումները ընթանում են բնականոն հունով, իսկ ձևեռային քննաշրջանի նախապատրաստման աշխատանքները կարող ենք համարել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ - ընդունել ի գիտություն և երկրորդ միջանկյալ ստուգումների ընթացքը և ձևեռային քննաշրջանի նախապատրաստման աշխատանքները համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա բաժնի էլեկտրոնային ընթացիկ հանձնարարությունների և միջանկյալ ստուգումների կատարման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Փ. Համբարձումյան, ով նշեց, որ արդեն իսկ տեղադրված են բոլոր

էլեկտրոնային ընթացիկ հանձնարարություններ և էլեկտրոնային միջանկյալները:

ՈՐՈՇԵՑԻՆ - ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ 2-րդ կուրսի մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի և 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսների 1-ին կիսամյակի հաշվետվությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ մագիստրոսները ներկայացրել են գրավոր հաշվետվություններ մանկավարժահետազոտական պրակտիկայի և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ՝ Առկա 4-րդ կուրսի և հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը և ամբիոնի այն դասախոսները, ովքեր ղեկավարում են ավարտական աշխատանքները: Նշեցին, որ ուսանողների կողմից կատարված է թեմաների ընտրություն, տրամադրված է աշխատանքնային պլանը և գրականության ցանկը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել և առկա 4-րդ կուրսի ու հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:

5. ա) ԼՍԵՑԻՆ՝ մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Սաբինա Գասպարյանի ամփոփիչ քննությունների հանձնման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ հաշվի առնելով մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Սաբինա Գասպարյանը հունվարի սկզբին Էրասմուս Պյուս կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում լինելու է Մեծ Բրիտանիայի Կիլի համալսարանում, թույլատրել ամփոփիչ քննությունները հանձնել միջանկյալ ստուգումների քննաշրջանում:

ՈՐՈՇԵՑԻՆ - ընդունել ի գիտություն:

6. բ) ԼՍԵՑԻՆ՝ Մասնագիտական առարկաների ծրագրերի վերանայման հանձնաժողովների ստեղծման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով ներկայացրեց հաստատման մասնագիտական առարկաների ծրագրերի վերանայման հանձնաժողովների հետևյալ անդամներին.

*Առարկաներ՝* Մաթեմատիկական անալիզ, դիֆերենցիալ հավասարումներ, վեկտորական անալիզ, իրական փոփոխականի ֆունկցիայի տեսություն, կոմպլեքս փոփոխականի ֆունկցիայի տեսություն, հավանականությունների տեսություն, վիճակագրություն, բարձրագույն մաթեմատիկա, մաթեմատիկա և հարակից առարկաներ

1. Լ. Ղուլղազարյան
2. Լ. Արաբաջյան
3. Գ. Ղուլղազարյան
4. Ս. Խաչատրյան
5. Վ. Վարդազարյան
6. Ն. Դովլաթյան
7. Ա. Մինասյան

*Առարկաներ՝* Բարձրագույն երկրաչափություն, գծային երկրաչափություն, վերլուծական երկրաչափություն, թենզորական անալիզ և հարակից առարկաներ

1. Լ. Ղուլղազարյան
2. Ս. Հարությունյան
3. Ա. Գրիգորյան
4. Վ. Ներսիսյան
5. Վ. Ոսկանյան

*Առարկաներ՝* Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա (ընդհանուր և մասնավոր), տարրական մաթեմատիկա և իլլյ, մաթեմատիկայի պատմություն և հարակից առարկաներ

1. Լ. Ղուլղազարյան
2. Ա. Ղուշյան
3. Վ. Վարդապետյան
4. Օ. Սահակյան
5. Ա. Մկրտչյան
6. Ա. Գրիգորյան
7. Ա. Ենոքյան

*Առարկաներ՝* Բարձրագույն հանրահաշիվ, գծային հանրահաշիվ, մաթ. տրամաբանություն, թվերի տեսություն, թվային համակարգեր և հարակից առարկաներ

1. Լ. Ղուլղազարյան

2. Հ. Միքայելյան
3. Գ. Ասատրյան
4. Ս. Դավիդով
5. Ա. Մկրտչյան

ՈՐՈՇԵՑԻՆ - հաստատել մասնագիտական առարկաների ծրագրերի վերանայման հանձնաժողովների անդամներին 1 դեմ, մնացածը կողմ ձայներով:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝



Լ.ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## ԱՐՁԱԳՈՒԹՅՈՒՆ 7

2020 թ. հունվարի 30-ին ժ. 14<sup>20</sup>-ին տեղի ունեցավ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստ, նիստին մասնակցում էին ամբիոնի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ –

1. Ամբիոնի հայցորդներ Ալավերդյան Սլավիկի և Հարությունյան Արաքսի գիտական թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը:

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

2. 2019-2020 ուստարվա 2–րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և առկա ու հեռակա ուս. ձևերի ընտրովի դասընթացների հաստատում:

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

3. Առկա ուսուցման 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Մկրտչյան

4. Classroom էլեկտրոնային հարթակում 1–ին կիսամյակի աշխատանքների մշտադիտարկման արդյունքներ:

Զեկուցող՝ Փ. Համբարձումյան

5. Ընթացիկ հարցեր

1. ա) ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի հայցորդ Ալավերդյան Սլավիկի գիտական թեմայի և ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլդագարյանը, Ա. Ղուշյանը:

Ա. Ղուշյանը ներկայացրեց թեմայի վերնագիրը, նպատակը, արդիականությունը, խնդիրները:

*ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Ժամանակակից հասարակության կողմից հանրակրթության առջև դրված առաջնային պահանջն է այնպիսի արդյունքների ապահովում, որոնք հիմնված չեն միայն որոշակի առարկայական ուսումնական բնագավառում սովորողների գիտելիքների և հմտությունների համակարգի վրա: Երկրաչափության չափորոշչային արդյունքը ապահովում է մի կողմից դպրոցական դասընթացի ավանդական ակադեմիական ուղղվածությանը, մյուս կողմից՝ մաթեմատիկական մեթոդների ազատ օգտագործման հնարավորությունը գործնականում (ուսումնական իրավիճակներում բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման գործընթացում, առօրյա կյանքում և այլն): Այս ամենը պահանջում է ոչ միայն առարկայական գիտելիքների իմացություն, այլև հմտությունների, գործունեության մեթոդների գործառնական կիրառություններ և բազմաառարկայական կոմպետենցիաների համակարգ: Հանրակրթության ոլորտում կոմպետենտային մոտեցումը հնարավոր է և նպատակահարմար իրականացնել բազմաառարկայական ուսումնական կոմպետենցիաների համակարգի ձևավորման հենքի վրա, մասնավորապես երկրաչափության ուսուցման գործընթացում՝ բնագիտամաթեմատիկական առարկաների ինտեգրման հիման վրա: Հանրակրթության պետական չափորոշիչներում երկրաչափության ուսուցման նպատակը ոչ միայն որպես գիտելիքների յուրացումն ու հմտությունների ձեռք բերումն է, այլև բազմաառարկայական կոմպետենցիաների ձևավորման միջոցով գիտական հասկացությունների համակարգի "մեկուսացված" ուսումնասիրությունը գործառնական հարթություն տեղափոխելը:*

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝ Բացահայտել, հիմնավորել, գործնականում իրականացնել հիմնական և ավագ դպրոցի աշակերտների ուսումնական կոմպետենցիաների համակարգի ձեւավորման մանկավարժական պայմանները և մեթոդաբանությունը, բնագիտական առարկաների հետ երկրաչափության ինտեգրման հիման վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրաչափության ուսուցման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ Է՝ սովորողների բազմառարկայական ուսումնական կոմպետենցիաների ձեւավորման մանկավարժական պայմանները և մեթոդաբանությունը՝ բնագիտական առարկաների հետ երկրաչափության ինտեգրման հենքի վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵԼԸ

ա/ Բացահայտել „բազմառարկայական կոմպետենցիա,, և „կոմպետենցիաների համակարգ,, հասկացությունների մեկնաբանությունների մեթոդաբանությունը գիտական, մանկավարժական և մեթոդական գրականության վերլուծության արդյունքում:

բ/ Բացահայտել բնագիտամաթեմատիկական առարկաների հետ երկրաչափության ինտեգրման հենքի վրա ձեւավորվող բազմառարկայական ուսումնական կոմպետենցիաների էությունը, վեր հանել նրանց կապը համընդհանուր ուսումնական կոմպետենցիաների հետ:

Բացահայտել և տեսականորեն հիմնավորել բնագիտամաթեմատիկական առարկաների հետ երկրաչափության ինտեգրման հենքի վրա ձեւավորվող բազմառարկայական ուսումնական կոմպետենցիաների ձեւավորման մանկավարժական պայմանները:

Մշակել և փորձարկել բնագիտամաթեմատիկական առարկաների հետ երկրաչափության ինտեգրման հենքի վրա ձեւավորվող բազմառարկայական

*ուսումնական կոմպետենցիաների համակարգի ձեւավորմանը նպաստող առաջադրանքների համալիր:*

*ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ Գիտական մանկավարժական և մեթոդական գրականության վերլուծություն, մանկավարժական փորձի ուսումնասիրում, արդյունքների վիճակագրական վերլուծություն, մանկավարժական հետազոտությունների քանակական և որակական մեթոդներ:*

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել հայցորդ Ալավերդյան Սլավիկի գիտական թեման՝ «*Բազմառարկայական կոմպետենցիաների համակարգը և դրա ներառումը երկրաչափության ուսուցման գործընթացում*» և թեմայի գիտական ղեկավար նշանակել մանկ. գիտ. թեկ., պրոֆեսոր Ալեքսանդր Ղուշյանին:

բ) ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի հայցորդ Հարությունյան Արաքսի գիտական թեմայի և ղեկավարի քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլազարյանը, Ա. Հարությունյանը:

Ա. Հարությունյանը ներկայացրեց թեմայի վերնագիրը, նպատակը, արդիականությունը, խնդիրները:

Հետազոտության *արդիականությունը*. Մաթեմատիկական կրթության նպատակների և բովանդակության հիմնախնդիրը միշտ առաջացրել է բազմաթիվ բանավեճեր և զրույցներ: Այս տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում մաթեմատիկական մեթոդների, մաթեմատիկական գիտելիքների և մտածողության մաթեմատիկական տեսակի փոխհարաբերությունների հարցը: Մաթեմատիկական առարկաների ծրագրերում, չափորոշիչներում , դասագրքերում հիմնականում խոսվում է մաթեմատիկական գիտելիքների և հանրակրթական որակների մասին: Վերջիններս, ենթադրվում է, կձևավորվեն մաթեմատիկական գիտելիքների յուրացման արդյունքում՝ որպես հետևանք: Նման ձևով պատմականորեն ձևավորվել է այն կարծիքը , որ սովորողները յուրացնելով մաթեմատիկական գիտելիքներ և լուծելով մաթեմատիկական խնդիրներ, յուրացնում

են նաև որոշ մաթեմատիկական մեթոդներ: Սակայն լուրջ հետազոտման կարիք կա, թե ինչպիսի կապ կա գիտելիքի, մեթոդի և մտածողության միջև. արդյոք գիտելիքի± միջոցով են յուրացնում որոշակի մեթոդներ և ձևավորվում է մտածողությունը: Նման հարցերի ուսումնասիրությունը կարևոր դեր ունի մաթեմատիկական կրթության բարեփոխումների խնդիրներում:

Հետազոտության *նպատակն* է ուսումնասիրել մաթեմատիկական մեթոդների այն համալիրը, որը կարող է հավակնել լինելու մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչը: Միաժամանակ բացահայտել մաթեմատիկական գիտելիքների այն նվազագույն ծավալը, առանց որի անհնար կլինի ապահովել առանձնացված մեթոդների յուրացումը:

Հետազոտության *օբյեկտը* մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչներն են:

Հետազոտության *առարկան է* մեթոդը, որպես մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչ:

Հետազոտության *խնդիրներն* են՝

- ա) Ուսումնասիրել թեմային վերաբերող գիտամեթոդական գրականություն,
- բ) Վերլուծել մաթեմատիկական առարկաների ծրագրերն ու դասագրքերի բովանդակությունը թեմայի համատեքստում,
- գ) Ուսումնասիրել մաթեմատիկական առարկաների ուսուցման կազմակերպման դրվածքը՝ «մեթոդը որպես մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչ» թեմայի համատեքստում,
- դ) Բացահայտել խնդրի դրվածքը գործնականում,
- ե) Ուսումնասիրել մաթեմատիկական մեթոդների յուրացումը ապահովող ուսուցման մեթոդների և միջոցների առանձնահատկությունները:

Հետազոտության *մեթոդները*. հետազոտական աշխատանք կատարելիս նախատեսում ենք օգտագործել տեսական և էմպիրիկ մեթոդներ(դիտում, զրույց, հարցում, անկետավորում, գիտափորձ):

Հետազոտության *տեսական և գործնական նշանակությունը*. Ուսումնասիրությունների արդյունքները կարևոր նշանակություն կունենան մաթեմատիկական կրթության հայեցակարգի, չափորոշիչների և ծրագրերի

ձևավորման խնդիրներում. հաշվի կառնվեն դասագրքերի և ուսումնադիդակտիկ նյութերի մշակման գործընթացներում, կնպաստեն հանրակրթական դպրոցներում մաթեմատիկական կրթության արդյունավետությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել հայցորդ Հարությունյան Արաքսի գիտական թեման՝ «Մեթոդը որպես մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչ» և թեմայի գիտական ղեկավար նշանակել Ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ, մանկ. գիտ. դոկտոր Մանուկ Մկրտչյանին:

2. ԼՍԵՑԻՆ՝ 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և առկա ու հեռակա ուս. ձևերի ընտրովի դասընթացների հաստատման հարցը:  
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլդագարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և առկա ուս. ձևերի ընտրովի դասընթացները:

3. ԼՍԵՑԻՆ՝ Առկա ուսուցման 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Մկրտչյանը, ով մասնավորաբար նշեց, որ ընդհանուր առմամբ 1-ին կիսամյակի քննությունների արդյունքները նորմալ են, բացառությամբ 4-րդ կուրսի մեկ ուսանողի և մագիստրատուրա 2-րդ կուրսի երկու ուսանողների մոտ: Բացակայությունների պատճառով որոշ առարկաներից ստացվել են 40-ից ցածր գնահատականներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննությունների արդյունքները համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ՝ Classroom էլեկտրոնային հարթակում 1-ին կիսամյակի աշխատանքների մշտադիտարկման արդյունքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Փ. Համբարձումյանը, ով մասնավորաբար նշեց, որ կատարվել է Classroom էլեկտրոնային հարթակում 1-ին կիսամյակի աշխատանքների մշտադիտարկում: Կատարված աշխատանքները գնահատվել է՝ «առկա է», «առկա չէ», «մասամբ է առկա» ձևաչափերով: Բոլոր դասընթացներում պահանջվող նյութերը առկա էին, միայն չորս դասընթացներում բացակայում էին կամ մասամբ էին առկա հարցաշարերը: Նշվեց նաև, որ արդեն իսկ բացված են 2-րդ կիսամյակի հեռակա ուս. ձևերի էլեկտրոնային դասընթացները և տեղադրված են առարկայական նկարագրերը, իսկ առկա ուս. ձևերի 2-րդ կիսամյակի էլեկտրոնային դասընթացները արդեն իսկ ստեղծվում են: Ամբիոնի կողմից կտեղադրվեն առարկայան նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Դասախոսները կարող են արդեն տեղադրել դասավանդվող նյութերը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1-ին կիսամյակում Classroom էլեկտրոնային հարթակում դասախոսների կողմից կատարված աշխատանքները համարել բավարար:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ





3. ԼՍԵՑԻՆ՝ Մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Գրիգորյանը, ով նշեց, որ փետրվարի 17-ից սկսվել են 2-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան, որը ընթանում է Ա. Շահինյանի անվան Ֆիզմաթ դպրոցում: Ուսանողներն արդեն այցելել են դպրոց, ծանոթացել դպրոցին, տնօրենի և ուսուցիչների հետ, կցվել դասարաններին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա 3-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկայի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Մկրտչյան, Ա. Մինասյան:

Ա. Մինասյան նշեց, որ հեռակա 3-րդ կուրսի 12 ուսանողներից 3-ը պրակտիկան անցկացնում են Երևանի թիվ 67 հիմնական դպրոցում, իսկ մյուսները տարբեր մարզային դպրոցներում: Պրակտիկան ընթանում է բնականոն հունով:

Ա. Մկրտչյան նշեց, որ հեռակա 5-րդ կուրսի պրակտիկան ընթանում է բնականոն հունով: Միայն մի քանի ուսանողների մոտ բացակայությունները շատ են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ ստուգումների հարցաշարերի ու տարբերակների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ընթացիկ ստուգումների հարցաշարերն ու տարբերակները:

6. ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա 1 կիսամյակի բակալավրի և 1 կուրսի մագիստրատուրայի քննաշրջանի ամփոփումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Մկրտչյան, ով մասնավորաբար նշեց, որ հեռակա մագիստրատուրայի 1-ին կուրսում, հեռակա բակալավր 1-ին կուրսում և հեռակա սոցիոլոգիա 2-րդ կուրսում երկուական ուսանողներ մի քանի առարկաներից ստացել են 41-ից ցածր գնահատականներ՝ բացակայությունների և քննություններին չհաճախելու պատճառով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

7. ԼՍԵՑԻՆ՝ Classroom Էլեկտրոնային հարթակում ամբիոնի անելիքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Փ. Համբարձումյանը, ով մասնավորաբար նշեց, որ Classroom Էլեկտրոնային հարթակում իրականացվող աշխատանքներն ընթանում են բնականոն հունով: 2-րդ կիսամյակի բոլոր Էլեկտրոնային դասընթացները բացված են, տեղադրված են առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Միայն մի քանի դասընթացում դեռևս չեն տեղադրվել դասավանդվող նյութերը, ուստի անհրաժեշտ է լրացնել բացը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

8. ԼՍԵՑԻՆ՝ ամբիոնի 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ամբիոնի 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝  
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ  
Փ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ







## Արձանագրություն 9.

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը տեղի ունեցավ 2020թ. մարտի 22-ին ժամը 14<sup>00</sup>-ին առցանց (<https://meet.google.com/guf-dbdc-fjz>).

### Օրակարգ`

1. Առցանց դասերի նախապատրաստում: Google Meet հավելվածի կիրառում:

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

2. Մագիստրատուրա 1,2 և բակալավր 3,4 կուրսերի միջանկյալների առցանց անցկացման նախապատրաստում:

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ` Առցանց դասերի նախապատրաստում: Google Meet հավելվածի կիրառում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ` Լ. Ղուլղազարյանը, ով մանավորաբար նշեց, որ կորոնավիրուսի կանխարգելման նպատակով համալսարանում դադարեցվել են դասերը և մենք անցել ենք առցանց ուսուցման: Առցանց ուսուցումը կազմակերպվելու է Classroom էլեկտրոնային հարթակի, ինչպես նաև Google Meet հավելվածի միջոցով: Դասերը պետք է իրականացվեն ըստ դասացուցակի, Classroom էլեկտրոնային հարթակում տեղադրելով համապատասխան դասընթացի մասին հայտարարություններ, առաջադրանքներ, հանձնարարություններ, ինչպես նաև կազմակերպել տեսադասեր Google Meet հավելվածի միջոցով:

ՈՐՈՇԵՑԻՆ` ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ` Մագիստրատուրա 1,2 և բակալավր 3,4 կուրսերի միջանկյալների առցանց անցկացման նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուղազարյանը, նշեց որ 23.03-27.03.20թ. շաբաթում, ըստ նախապես տրամադրված գրաֆիկի, նախատեսված է մագիստրատուրա 1,2 և բակալավր 3,4 կուրսերի միջանկյալները, որոնք ևս պետք է իրականացվեն առցանց եղանակով: Իսկ բակալավր 1-ին և 2-րդ կուրսերի միջանկյալ ստուգումները նախատեսված են 30.03-03.03.20 շաբաթում: Միջանկյալ ստուգումներն անցկացվելու են Classroom էլեկտրոնային հարթակում, ըստ գրաֆիկի տեղադրելով միջանկյալ ստուգման տոմսերը և նշելով առավելագույնը 12 ժամ ժամկետ: Այն միջանկյալ ստուգումները, որոնց համար նախատեսված է ռեֆերատ, բացվում է ռեֆերատների կցման հարթակ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝



Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## Արձանագրություն 10.

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը տեղի ունեցավ 2020թ. մարտի 27-ին ժամը 14<sup>00</sup>-ին առցանց (<https://meet.google.com/guf-dbdc-fjz>).

### Օրակարգ`

1. Առցանց դասընթացների ընթացքի մասին:

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

2. Առաջին միջանկյալ ստուգումների մասին:

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստավորման մասին:

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

4. Բակալավր 3-րդ կուրսի և մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժական պրակտիկայի և բակալավր 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկայի անցկացման մասին:

Զեկուցող` Վ. Վարդապետյան

5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ` Առցանց դասընթացների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ` Լ. Ղուլղազարյանը, ով մանավորաբար նշեց, որ կորոնավիրուսի կանխարգելման նպատակով համալսարանում դադարեցվել են դասերը և մենք անցել ենք առցանց ուսուցման: Առցանց ուսուցումը կազմակերպվել է Classroom էլեկտրոնային հարթակի և Google Meet հավելվածի միջոցով: Նշվեց նաև, որ պետք է

լինել հետևողական և դասերը կազմակերպել ըստ դասացուցակի՝ հանդիպելով Google Meet հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ Առաջին միջանկյալ ստուգումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով մանավորաբար նշեց, որ առաջին միջանկյալ ստուգումները ևս անցկացվում են անցանց տարբերակով: Արդեն իսկ բակալավր 3-րդ ու 4-րդ և մագիստրատուրա 1-ին և 2-րդ կուրսերի առաջին միջանկյալ ստուգումները ավարտվել են: Հաջորդ շաբաթ նախատեսված է բակալավր 1-ին և 2-րդ կուրսերի միջանկյալ ստուգումները: Միջանկյալ ստուգումների շաբաթում տվյալ կուրսի համար դասեր նախատեսված չեն: Եղեք հետևողական և ըստ նախատեսված գրաֆիկի տեղադրեք Classroom էլեկտրոնայի հարթակ միջանկյալ ստուգումների տարբերակները:

Վ. Ոսկանյանը նշեց, որ «սոցիոլոգիա» և «սոցիալական աշխատանք» բաժիններում միջանկյալը անց է կացնելու Google Meet հավելվածի միջոցով, 80 րոպե տևողությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ Classroom էլեկտրոնային հարթակում բացված են բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի համար հարթակներ, որտեղ ուսանողները կտեղադրեն իրենց աշխատանքները և դասախոսների կողմից կիրականացվեն ատեստավորում: Հեռակա 5-րդ կուրսի ուսանողներն իրենց ավարտական աշխատանքները կուղարկեն ամբիոնի պաշտոնական փոստին, որոնք ևս համակարգված կտրամադրվեն դասախոսներին ատեստավորում իրականացնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

4. ԼՄԵՑԻՆ՝ Բակալավր 3-րդ կուրսի և մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժական պրակտիկայի և բակալավր 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկայի անցկացման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ. Վարդապետյան, ով նշեց, որ բակալավր 3-րդ կուրսի և մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժական պրակտիկան հնարավոր է սկսվի ապրիլի 6-ից, ինչի համար մեզ նախօրոք կտեղեկացնեն: Իսկ բակալավր 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկան կշարունակվի, ուսանողները արդեն իսկ ստացել են հանձնարարություններ վերլուծելու առցանց իրականացվող դասերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝



Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## Արձանագրություն 11.

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը տեղի ունեցավ 2020թ. ապրիլի 3-ին ժամը 14<sup>00</sup>-ին առցանց (<https://meet.google.com/guf-dbdc-fjz>).

Օրակարգ՝

1. Առցանց դասընթացների ընթացքի մասին

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

2. Բակալավր 1,2 կուրսերի առաջին միջանկյալ ստուգումների մասին

Զեկուցող՝ Փ. Համբարձումյան

3. Հեռակա բաժնի ավարտական աշխատանքների ատեստավորման մասին

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

4. Պրակտիկաների անցկացման ժամանակացույցների և ընթացքի մասին

Զեկուցող՝ Վ. Վարդապետյան

5. Բարելավման գործողությունների պլանի քննարկում՝ (լրացումներ, դիտողություններ)

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

6. Մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսությունների կազմակերպման մասին

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

7. Հեռակա 5 կուրսի միջանկյալների անցկացման մասին

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

8. Հեռակա 1,2 կուրսերի գնահատվող առաջադրանքների և խորհրդատվության կամակերպման մասին

Զեկուցող՝ Լ. Ղուլղազարյան

9. Ընթացիկ հարցեր՝

ա) Ուսանողների վարձավճարների մասին

1. ԼՍԵՑԻՆ՝ Առցանց դասընթացների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով մանավորաբար նշեց, որ կորոնավիրուսի կանխարգելման նպատակով համալսարանում դադարեցվել են դասերը և մենք շարունակում ենք առցանց ուսուցում: Այն պատշաճ ձևով կազմակերպվում է Classroom էլեկտրոնային հարթակի և Google Meet հավելվածի միջոցով: Նշվեց նաև, որ պետք է շարունակել լինել հետևողական և դասերը կազմակերպել ըստ դասացուցակի՝ հանդիպելով Google Meet հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ Բակալավր 1,2 կուրսերի առաջին միջանկյալ ստուգումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Փ. Համբարձումյան, ով նշեց, որ այս շաբաթվա ընթացքում առաջին միջանկյալ ստուգումներն են հանձնել բակալավր 1-ին և 2-րդ կուրսերը, բացառությամբ՝ աշխարհագրություն և սոցիոլոգիա, սոց. աշխատանքներ բաժինների 1-ին կուրսերը, որոնք կհանձնեն ըստ գրաֆիկի հաջորդ շաբաթների ընթացքում: Միջանկյալներն կազմակերպվել են Classroom էլեկտրոնային հարթակի միջոցով և ընթացել են բնականոն հունով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա բաժնի ավարտական աշխատանքների ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով մանավորաբար նշեց, որ հեռակա բաժնի 5-րդ կուրսի ուսանողներն իրենց ավարտական աշխատանքները (դեռևս ոչ վերջնական) ուղարկել են ամբիոնի պաշտոնական փոստին և այժմ տեղադրված են Classroom-ի ավարտական աշխատանքների համար նախատեսված հարթակում: Բոլոր դասախոսներին հարթակը հասանելի է և անհրաժեշտ է կատարել ատեստավորում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ՝ Պրակտիկաների անցկացման ժամանակացույցների և ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ. Վարդապետյանը, ով նշեց, որ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան հետաձգվում է մինչև ապրիլի 27-ը: Այս ընթացքում 3-րդ կուրսում շարունակվելու են ուսումնական գործընթացը ըստ թեմատիկ տրոհման: Իսկ մագիստրատուրա 1-ին կուրս մանկավարժահետազոտական պրակտիկան կընթանա

առցանց՝ ապրիլի 13-ից մինչև մայիսի 1-ը: Այդ ընթացքում ուսանողները կմիանան իրենց դեկավարների բակալավր 1-4-րդ կուրսերի դասընթացներին Classroom-ում և կմասնակցեն այդ դասընթացներին Google Meet հավելվածի միջոցով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ՝ Բարելավման գործողությունների պլանի քննարկում՝ (լրացումներ, դիտողություններ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, Ս. Հարությունյանը, Լ. Արաբաջյանը, Ս. Հակոբյանը, Հ. Միքայելյանը, Գ. Ղուլղազարյանը:

Լ. Ղուլղազարյանը նշեց, որ բոլոր դասախոսներին ուղարկված է եղել «Բարելավման գործողությունների պլանը» և կարող են կատարել լրացումներ և դիտողություններ, որոնք կհավաքագրվեն Ա. Մկրտչյանի մոտ, այնուհետև կներկայացվեն ամբիոնի կողմից:

Ս. Հարությունյանն ու Ս. Հակոբյանը նշեցին, որ արդեն իսկ ուսումնասիրել են և ներկայացրել որոշ առաջարկներ և դիտողություններ, որոնք ուղարկել են ամբիոնի պաշտոնական փոստին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ՝ Մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսությունների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով մանավորաբար նշեց, որ կախված երկրում հաստատված արտակարգ դրությունից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ այս տարի մագիստրոսական թեզերի գրախոսությունը թույլատրում են կազմակերպել առանց արտաքին գրախոսման, այսինքն սահմանափակվել ներքին գրախոսություններով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն և մագիստրոսական թեզերի գրախոսությունը կազմակերպել ըստ ցանկության՝ արտաքին կամ ամբիոնի ներսում:

7. ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա 5 կուրսի միջանկյալների անցկացման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ հեռակա 5 կուրսի 2—րդ կիսամյակի միջանկյալները ևս անցկացվելու են առցանց ապրիլի 13-ից 17-ը ընկած

Ժամանակաշրջանում: Ուսանողների քննական տոմսերն ուղարկվելու են դասախոսների պաշտոնական @aspu.am փոստերից, այնուհետև ուղարկված պատասխանները խմբավորվելու են ամբիոնի պաշտոնական փոստի Drive-ում և տրվելու է դիտման հասանելիություն ֆակուլտետի դեկանատին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

8. ԼՍԵՑԻՆ՝ Հեռակա 1,2 կուրսերի գնահատվող առաջադրանքների և խորհրդատվության կամակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ ապրիլի 13-ից 17 շաբաթում նախատեսված է էլեկտրոնային խորհրդատվություն և էլեկտրոնային հանձնարարական: Անհրաժեշտ է նախաձեռնել էլ. քննարկում մինչև էլ. հանձնարարականի տեղադրումը: Ընթացիկ էլ. հանձնարարականը տեղադրել համապատասխան Class-երում առնվազն 7 օր վերջնաժամկետով:


ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

9. ԼՍԵՑԻՆ՝ Ուսանողների վարձավճարների մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ անհրաժեշտ է հորդորել ուսանողներին կատարել վարձավճարները, եթե ոչ ամբողջությամբ, ապա հնարավոր է նաև ըստ ամիսների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՍԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ 

Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

## Արձանագրություն 12.

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը տեղի ունեցավ 2020թ. ապրիլի 10-ին ժամը 14<sup>00</sup>-ին առցանց (<https://meet.google.com/guf-dbdc-fjz> ).

### Օրակարգ`

1. Առցանց դասընթացների ընթացքի մասին  
Զեկուցող` Փ. Համբարձումյան
  2. Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ ստուգման առցանց անցկացման մասին  
Զեկուցող` Լ. Ղուլղազարյան
  3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի մասին  
Զեկուցող` Լ. Ղուլղազարյան
  4. Մագիստրատուրա 1-ին կուրսի պրակտիկայի կազմակերպման մասին  
Զեկուցող` Վ. Վարդապետյան
  5. Ընթացիկ հարցեր
1. ԼՍԵՑԻՆ` Առցանց դասընթացների ընթացքի մասին:  
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ` Փ. Համբարձումյանը, ով մանավորաբար նշեց, որ առցանց ուսուցումը պատշաճ ձևով կազմակերպվում է Classroom էլեկտրոնային հարթակի և Google Meet հավելվածի միջոցով: Դասերը կազմակերպվում են ըստ դասացուցակի` հանդիպելով Google Meet հարթակում և ընթանում են բնականոն հունով:  
ՈՐՈՇԵՑԻՆ` ընդունել ի գիտություն:
  2. ԼՍԵՑԻՆ` Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ ստուգման առցանց անցկացման մասին:  
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ` Լ. Ղուլղազարյանը, ով նշեց, որ հեռակա 5 կուրսի 2-րդ կիսամյակի միջանկյալները անցկացվելու են հաջորդ շաբաթ առցանց: Ուսանողների քննական տոմսերն ուղարկվելու են դասախոսների պաշտոնական @aspu.am փոստերից, այնուհետև ուղարկված պատասխանները խմբավորվելու են ամբիոնի

պաշտոնական փոստի Drive-ում և տրվելու է դիտման հասանելիություն ֆակուտետի ղեկանատին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Ղուլղազարյանը և ամբիոնի դասախոսները: Նշվեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարումը ընթանում է բնականոն հունով և ապրիլի վերջին շաբաթում կկազմակերպվի ևս մեկ առցանց ասեստավորում:


ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ՝ Մագիստրատուրա 1-ին կուրսի պրակտիկայի կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ. Վարդապետյանը, ով նշեց, որ մագիստրատուրա 1-ին կուրս մանկավարժահետազոտական պրակտիկան կընթանա առցանց՝ ապրիլի 13-ից մինչև մայիսի 1-ը: Այդ ընթացքում ուսանողները կմիանան իրենց ղեկավարների բակալավր 1-4-րդ կուրսերի դասընթացներին Classroom-ում որպես դասախոսներ և կմասնակցեն այդ դասընթացներին Google Meet հավելվածի միջոցով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդունել ի գիտություն:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՍԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ 

Լ. ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Փ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

## Արձանագրություն 13.

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը տեղի ունեցավ 2020թ. ապրիլի 17-ին ժամը 14<sup>00</sup>-ին առցանց (<https://meet.google.com/guf-dbdc-fjz> ).

### Օրակարգ`

1. Առցանց դասընթացների ընթացքի մասին

Զեկուցող` Փ. Համբարձումյան

2. Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ ստուգմաների ամփոփում

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

3. Մագիստրատուրա 1-ին կուրսի պրակտիկայի ընթացքի մասին

Զեկուցող` Վ. Վարդապետյան

4. 3-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման մասին

Զեկուցող` Վ. Վարդապետյան

5. Հեռակա բաժնի բակալավր 1-ին և 2-րդ կուրսերի խորհրդատվության և էլեկտրոնային առաջադրանքների տրամադրման մասին

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

6. Բակալավր 4-րդ կուրսի, հեռակա բակալավր 5-րդ կուրսի և մագիստրատուրա 2-րդ կուրսի ավարտական և մագիստրոսական աշխատանքների առցանց ատեստավորման օրերը նշանակելու մասին:

Զեկուցող` Լ. Ղուլղազարյան

7. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ` Առցանց դասընթացների ընթացքի մասին:
